Պարունակում է մրցութային գաղտնիք

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 45

«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի 2009թ. սեպտեմբերի 15-ին ժամը 14:00-ին ՀՀ Կառավարության նիստերի դահլիճում կայացած նիստի

Նիստը նախագահում էր.

ՀՀ Վարչապետ, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ Տիգրան Սարգսյանը

Մասնակցում էին՝

Կառավարման խորհրդի անդամներ.

Արմեն Գևորգյանը	ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար
Վահրամ Ներսիսյանցը	ՀՀ Նախագահի տնտեսական հարցերով գլխավոր խորհրդական, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի փոխնախագահ
Գերասիմ Ալավերդյանը	ՀՀ գյուղատնտեսության նախարար
Գուրգեն Սարգսյանը	ՀՀ տրանսպորտի նախարար
Վարդան Արամյանը	ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
Արա Պետրոսյանը	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
Շիրակ Միքայելյանը	«Աշխատանք և հայրենիք» ՀԿ-ի լիազոր ներկայացուցիչ
Կարեն Զադոյանը	«Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ
Պողոս Շահինյանը	«Ճանապարհային անվտանգության ազգային խորհուրդ» ՀԿ-ի նախագահ
Վիկտոր Ենգիբարյանը	«Հայաստանի եվրոպական շարժում» ՀԿ-ի նախագահ

Կառավարման խորհրդի դիտորդներ.

Ալեքս Ռասինը	Հայաստանում ԱՄՆ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի գրասենյակի տնօրեն
Ռուբեն Խաչատրյանը	«Հայաստանում վայրի բնության և մշակութային արժեքների պահպանության» հիմնադրամի տնօրեն,

	ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի բնապահպանական դիտորդ

Նիստից բացակայում էին.

Ներսես Երիցյանը	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Տիգրան Դավթյանը	ՀՀ ֆինանսների նախարար
Արման Ոսկանյանը	«Տավուշի զարգացման» ՀԿ-ի ներկայացուցիչ

Նիստին հրավիրված էին.

Դավիթ Սարգսյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Անդրանիկ Անդրեասյանը	ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ

Նիստին մասնակցում էին նաև.

Արա Հովսեփյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն
Նորա Մարտիրոսյանը	«Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու, կառավարման խորհրդի քարտուղար
Հովհաննես Սահակյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տնտեսագիտական վարչության պետի տեղակալ
Արամ Անանյանը	ՀՀ Վարչապետի օգնական
Ռիմա Եգանյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության առաջատար մասնագետ
Մարինա Քուշքյանը	ՀՀ կառավարության աշխատակազմի արձանագրային բաժնի աշխատակից
Տիգրանուհի Բաղդասարյանը	Թարգմանիչ

Նիստը բացեց ՀՀ Վարչապետ, «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ - Հայաստան ՊՈԱԿ-ի Կառավարման խորհրդի նախագահ Տիգրան Սարգսյանը:

Նիստի օրակարգում ներկայացվել էին հետևյալ հարցերը.

1. ՀՄԿ-ին ներկայացվող 13-րդ Հատկացման հայտի և դրան կցվող ներքոնշյալ փաստաթղթերի քննարկում և հաստատում.

   ա/ Հատկացման հայտ և եռամսյակային ֆինանսական հաշվետվություն,

բ/ Հատկացման նախապայմանների հաշվետվություն,
գ/ Աշխատանքային պլան,
դ/ Ամփոփ եռամսյակային հաշվետվություն և ցուցանիշների վերահսկման աղյուսակ,
ե/ Գնումների կատարման հաշվետվություն և գնումների պլան:

2. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում 17 պոմպակայանների վերականգնման պայմանագրի նախագծի քննարկում և հաստատում:
3. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի տեխնիկական վերահսկողությունն իրականացնող CES Consulting Engineers Salzgitter GmbH (Գերմանիա) համատեղ AHT GROUP AG (Գերմանիա) և Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան (Հայաստան) կոնսորցիումի հետ 2009թ. փետրվարի 16-ին կնքված պայմանագրի փոփոխության նախագծի քննարկում և հաստատում:
4. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում «Պոմպակայանների վերականգնման վերջնական նախագծի վերանայում», IAP/SSS-01 խորհրդատվական ծառայությունների պայմանագրի նախագծի քննարկում և հաստատում:

5. «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում կնքված 4 ինքնահոս համակարգերի կառուցման պայմանագրում Սպիտակի ինքնահոս համակարգը ավելացնելու հարցի քննարկում և հաստատում:

6. Այլ հարցեր՝

ա/ «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում 6 մայր ջրանցքների Առաջին փաթեթի վերականգնման աշխատանքներն իրականացնող շինարարական ընկերության կողմից առաջարկված շինարարական տեխնոլոգիաների կիրառման հարցի քննարկում և հաստատում:

բ/ «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի Ջրից դեպի Շուկա բաղադրիչի շրջանակներում նախատեսվող «Գնիր հայկականը» արշավի վերաբերյալ տեղեկատվության ներկայացում:

Օրակարգը հաստատվեց միաձայն:

Օրակարգին կից ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կողմից կառավարման խորհրդի անդամներին ներկայացվել էր նաև յուրաքանչյուր հարցի վերաբերյալ համապատասխան տեղեկանք՝ կից փաստաթղթերով:

Նիստի ընթացքում.

Օրակարգի 1-ին հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Արա Հովսեփյանը տեղեկացրեց, որ հաջորդ՝ հոկտեմբեր-դեկտեմբեր եռամսյակի համար ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը նախատեսում է ՀՄԿ-ից ընդհանուր վճարային համակարգով ստանալ 16,583,699 ԱՄՆ դոլարի չափով ֆինանսավորում, որի մեծ մասը՝ 15,677,562 ԱՄՆ դոլարն

ուղղված կլինի Ոռոգվող գյուղատնտեսություն ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումների, մասնավորապես՝ շինարարական աշխատանքների ֆինանսավորմանը:

Ներկայացվեցին նաև այն միջկոմպոնենտային գումարային վերաբաշխումները, որոնք ուղղված են լինելու 17 պոմպակայանների վերականգնման աշխատանքների ֆինանսավորմանը:

Արա Հովսեփյանը ներկաների ուշադրությունը հրավիրեց տվյալ հատկացման հայտին կից ներկայացվող նախապայմանների կատարման հաշվետվության վրա՝ նշելով, որ կատարման ենթակա նախապայմաններից բավարարված չէ միայն մեկը, որը վերաբերում է ՀՀ ոռոգման և դրենաժի քաղաքականության և ռազմավարության հաստատմանը: Կառավարման խորհրդի նախորդ նիստում այս հարցը քննարկվել էր և որոշում էր կայացվել վերոնշյալ փաստաթուղթն ուղարկել բոլոր շահագրգիռ մարմիններին, ստանալ վերջիններիս դիտողություններն ու առաջարկությունները, ամփոփել դրանք և սեպտեմբերի 13-ին կազմակերպել համատեղ քննարկում, ընդ որում որպես փաստաթղթի հաստատման վերջնաժամկետ սահմանվել էր 2009թ. նոյեմբերի 20-ը:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ այս հարցի շուրջ մի քանի քննարկումներ են տեղի ունեցել ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար պարոն Արմեն Գևորգյանի մոտ, որի ընթացքում քննարկվել են մի շարք առանցքային հարցեր:

Արմեն Գևորգյանը հայտնեց, որ փաստաթղթի վերաբերյալ դեռևս կան մի շարք հարցեր, որոնց պատասխանները տրված չեն, ընդ որում դրանց մի մասը ենթադրում է նաև քաղաքական որոշումների ընդունման անհրաժեշտություն: ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ը ստացել է բոլոր շահագրգիռ մարմինների դիտողություններն ու առաջարկությունները և գտնվում է վերջիններիս ամփոփման փուլում, որից հետո նախատեսվում է սույն թվականի սեպտեմբերի 19-ին կազմակերպել ևս մեկ քննարկում, որի ընթացքում կնախանշվեն հետագա քայլերը: Առկա է հետագա առաջընթացի երկու ուղղություն. Առաջինը՝ քննարկել և Կառավարման խորհրդի նախորդ նիստում նախանշված ժամկետներում հաստատել միայն ՀՀ ոռոգման և դրենաժի քաղաքականությունը, որը կվերլուծի տվյալ ոլորտներում առկա վիճակը և խնդիրները և կնախանշի ոլորտի զարգացման հնարավոր ուղիները, սակայն նշված ժամկետում հնարավոր չէ հաստատել նաև ռազմավարությունը, որը ավելի խորը ուսումնասիրության, մասնավորապես՝ ֆինանսական ուսումնասիրության կարիք ունի, և երկրորդ՝ հետաձգել ՀՀ ոռոգման և դրենաժի քաղաքականության և ռազմավարության հաստատման ժամկետը:

Ներկայումս ՀՀ կառավարությունը ակնկալում է Համաշխարհային բանկից հերթական վարկի ստացումը, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել նաև ջրօգտագործողների ընկերությունների աուդիտ, բացի այդ ՀՀ ազգային ժողովի վերահսկիչ պալատը ակտիվ աշխատանք է տանում այս ոլորտում: Միանշանակ վերջիններիս արդյունքները անհրաժեշտ է հաշվի առնել ռազմավարության մշակման և հաստատման գործընթացում, քանի որ ռազմավարությունը պետք է լինի հստակ գործողությունների պլան՝ համապատասխան ֆինանսական հաշվարկներով և իրականացման նախանշված ժամկետներով:

Արա Հովսեփյանը նաև ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ծրագրի գնումների պլանում կատարված փոփոխությունները՝ նշելով որ նախկինում ծրագրից դուրս մնացած երկու ինքնահոս համակարգեր՝ Սպիտակը և Հալավարը, նորից մտցվել են ծրագրի մեջ՝ ի շնորհիվ ՀՄՀ-Հայաստանի տեխնիկական թիմի լրացուցիչ ուղումնասիրությունների:

Արա Հովսեփյանը հայտենց, որ Սպիտակի ինքնահոս համակարգի կառուցման հարցը ներկայացվում է տվյալ նիստի օրակարգի հարցերի շրջանակում, իսկ Հալավարի ինքնահոս համարգի կառուցման հարցի վերաբերյալ ՀՄՀ-Հայաստանը տեղեկատվություն կներկայացնի Կառավարման խորհրդի հաջորդ նիստի ընթացքում՝ ՀՄՀ-Հայաստան ծրագրի շրջանակներում իրականցվող մրցույթների արդյունքների ամփոփումից հետո:

Քննարկումներից հետո **<u>միաձայն</u> որոշվեց՝** հաստատել ՀՄԿ-ին ներկայացվող 13-րդ Հատկացման հայտի և դրան կցվող փաստաթղթերը :

Օրակարգի 2-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

ՀՀ Վարչապետը հետաքրքրվեց, թե հնարավոր չէ արդյո՞ք ավելի արագացնել 17 պոմպակայանների վերականգնման պայմանագրի կնքումը և աշխատանքների իրականացումը:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ն արդեն իսկ սկսել է բանակցությունները հաղթող ընկերության հետ, իսկ վերջինս էլ իր հերթին դիմել է Ֆրանսիայի կառավարությանը երաշխավորության համար, որպեսզի ընկերությունը կարողանա ՀՄՀ-Հայաստանին ներկայացնի կնքվելիք պայմանագրի առնվազն 85%-ի չափով բանկային երաշխիք:

Պարզաբանումից հետո **<u>միաձայն</u> որոշվեց՝** հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում 17 պոմպակայանների վերականգնման պայմանագրի նախագիծը՝ պայմանով, որ տեղեկանքում նշված խնդիրները, որոնք բարձրացվել են ՀՄԿ-ի կողմից, բարձրացվեն բանակցային գործընթացի ժամանակ:

Այսպիսով, օրակարգի երկրորդ հարցի շուրջ արձանագրվեց հետևյալ հանձնարարականը՝

ՀՄՀ-Հայաստանը 17 պոմպակայանների վերականգնման մրցույթի հաղթող ընկերության հետ կքննարկի գնահատող հանձնաժողովի և ՀՄԿ-ի կողմից բարձրացված հարցերը և պատասխանները բավարար համարելու պարագայում պայմանագրի նախագիծը կուղարկի ՀՄԿ-ի հաստատմանը, որից հետո կկնքի պայմանագիրը:

Օրակարգի 3-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

<u>Միաձայն</u> որոշվեց՝ հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի ենթակառուցվածք բաղադրիչի տեխնիկական վերահսկողությունն իրականացնող CES Consulting Engineers Salzgitter GmbH (Գերմանիա) համատեղ AHT GROUP AG (Գերմանիա) և Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան (Հայաստան) կոնսորցիումի հետ 2009թ. փետրվարի 16-ին կնքված պայմանագրի փոփոխության նախագիծը:

Օրակարգի 4-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

<u>Միաձայն</u> որոշվեց՝ հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում «Պոմպակայանների վերականգնման վերջնական նախագծի վերանայում», IAP/SSS-01 խորհրդատվական ծառայությունների պայմանագրի նախագիծը:

Օրակարգի 5-րդ հարցը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

<u>Միաձայն</u> որոշվեց հաստատել «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի ենթակառուցվածք բաղադրիչի շրջանակներում կնքված 4 ինքնահոս համակարգերի կառուցման պայմանագրում Սպիտակի ինքնահոս համակարգն ավելացնելու հարցը:

Այսպիսով, օրակարգի հինգերորդ հարցի շուրջ արձանագրվեց հետևյալ հանձնարարականը՝
ՀՄՀ-Հայաստանը Սպիտակի ինքնահոս համակարգը 4 ինքնահոս համակարգերի կառուցման պայմանագրում ավելացնելու հարցը կներկայացնի ՀՄԿ-ի հավանությանը և վերջինիս

դրական պատասխանը ստանալու պարագայում կբանակցի համապատասխան կապալառու կազմակերպության հետ աշխատանքների իրականացման գնի վերաբերյալ և համապատասխան պայմանագրի փոփոխության նախագիծը կներկայացնի ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի կառավարման խորհրդի, իսկ հետո նաև ՀՄԿ-ի հաստատմանը:

Օրակարգի 6-րդ հարցի ա/ կետը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ այս հարցը քննարկվել է ՀՀ ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ պարոն Անդրանիկ Անդրեասյանի հետ և ընդհանուր համաձայնություն է ձեռք բերվել, որ կապալառուն կիրառի տորկրետ, որը հնարավորություն կտա աշխատանքներն ավարտել նախատեսված ժամկետում՝ 2010թ. ապրիլին:

Անդրանիկ Անդրեասյանը հավաստեց այդ հանգամանքը, նշելով, որ ներկայումս մայր ջրանցքների վիճակը պարզապես անմխիթար է և տորկրետի կիրառումն անհրաժեշտ է թույլ տալ, որպեսզի աշխատանքներն առաջ ընթանան: Բացի այդ այս դեպքում համեմատության հնարավորություն կլինի տորկրետով վերականգնված հատվածների և բետոնե սալերով վերականգնված հատվածների միջև, որը թույլ կտա հասկանալ այս երկու մոտեցումների առավելություններն ու թերությունները:

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը հարցրեց, թե քանի՞ տարի է տորկրետով վերականգնված ջրանցքի կյանքի տևողությունը և արժեքը:

Անդրանիկ Անդրեասյանը հայտնեց, որ տորկրետի կյանքի տևողությունը 5-7 տարի է, իսկ բետոնինը՝ 20-25 տարի, մինչդեռ գինը գրեթե նույնն է:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ համաձայն ՀՄԿ-ի և կապալառու կազմակերպության տեխնիկական մասնագետների կարծիքի՝ ճիշտ պահպանման դեպքում տորկրետն ունի նույն կյանքի տևողությունն ինչ՝ բետոնը: Բացի այդ տորկրետի կիրառման դեպքում հեշտանում է հավասար հաստությամբ երեսապատման իրականացումը, քանի որ անհարթ հին երեսապտման բետոնի վրա նույնանման հաստությամբ կաղապարային բետոն տեղադրելը հնարավոր չէ, բացի այդ ավելի հեշտ է չեզոքացնել ցածր ջերմաստիճանների ազդեցությունը, քանի որ տորկրետը պարունակում է ավելի քիչ ջուր և հնարավոր է այն անմիջապես ծածկել ջերմա և ջրամեկուսիչ ծածկոցներով:

Վահրամ Ներսիսյանցը հարցրեց, թե որքա՞ն են կազմում վերջինիս պահպանման ծախսերը:

Արա Հովսեփյանը նշեց, որ գումարային տեսանկյունից տորկրետի պահպանումն ավելի էժան է քան բետոնինը, սակայն խնդիրն այն է, որ տորկրետի պահպանության մասով առկա է փորձի պակաս:

Արմեն Գևորգյանը նշեց, որ Ձրառն իր կողմից տրամադրվող ջրի արժեքի մեջ չի ներառում պահպանման ծախսերը և ՀՀ կառավարությունը ՀՀ պետական բյուջեից է միջոցներ հատկացնում պահպանման համար, որն այս դեպքում բարդացնում է պահպանման հարցը:

ՀՀ Վարչապետը հարցրեց, թե արդյո՞ք տորկրետի կիրառումն իրականացվելու է որպես պիլոտային ծրագիր:

Արա Հովսեփյանը պատասխանեց, որ մայր ջրանցքների վերականգնման Առաջին փաթեթի պայմանագրում նախատեսվում է վերականգնել ևս 3 կմ մայր ջրանց, որի սակայն ոչ բոլոր հատվածներն են վերականգնվելու տորկրետով:

Արմեն Գևորգյանը նշեց, որ ըստ էության տորկրետի դեպքում օգտագործվում է նույն գումարը, սակայն ստացվում է ջրանցի կյանքի մոտ երեք անգամ կարճ տևողության: Ավելի լավ կլիներ

շարունակել կիրառել այն նույն տեխնոլոգիաները, որով սկսվել էր շինարարությունը, սակայն ակնհայտ է, որ այս պարագայում որոշիչ դեր է խաղում ժամանակը:

Արա Հովսեփյանը նշեց, որ ժամանակից բացի առանցքային է նաև գումարը, քանի որ պարզ է դարձել, որ նախագծող ընկերության կատարած աշխատանքն անթերի չի եղել և արդեն իսկ կնքվել են մի քանի փոփոխման պատվերներ, որի արդյունքում պայմանագրի գինը նախնական գնից աճել է: Տորկրետի կիրառման պարագայում ՀՄՀ-Հայաստանը ստիպված չի լինի ծախսելու բյուջեով նախատեսված գումարից էապես ավել գումար: Բացի այդ, համաձայն տեխնիկական մասնագետների հավաստումների, տորկրետի և բետոնի ամրակցումն ավելի ամուր է:

Վահրամ Ներսիսյանցը հարցրեց, թե քանի՞ հերթափոխով է աշխատում կապալառուի աշխատակազմը:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ ներկայումս վերջիններս աշխատում են մեկ հերթափոխով, սակայն անհրաժեշտության պարագայում կարող են աշխատել նաև ավել հերթափոխերով: Սա ըստ էության կապալառուի խնդիրն է. հստակ է միայն այն, որ պայմանագրով նախատեսված աշխատանքները պետք է ավարտվեն 2010թ. ապրիլին:

Պողոս Շահինյանը հարցրեց, թե բետոնի կիրառման պարագայում պայմանագրով նախատեսված աշխատանքների համար որքա՞ն հավելյալ ժամկետ է անհրաժեշտ:

Արա Հովսեփյանը նշեց, որ այդ հարցը միանշանակ պարզ չէ, սակայն ակնհայտ է, որ այն կլինի շատ ավելի ուշ, քան պայմանագրով նախատեսված վերջնաժամկետն է:

Պողոս Շահինյանը հարցրեց, թե ո՞րն է ավելի թանկ վերանորոգել՝ տորկրետը, թե՝ բետոնը:

Անդրանիկ Անդրեասյանը հայտենց, թե բետոնի վերանորոգումն ավելի թանկ է:

Քննարկումներից հետո **<u>միաձայն</u> որոշվեց** հավանություն տալ մայր ջրանցքների վերականգնման աշխատանքներն իրականացնող կապալառու կազմակերպության կողմից տորկրետի կիրառմանը:

Օրակարգի 6-րդ հարցի բ/ կետը ներկայացրեց ՀՄՀ-Հայաստան ՊՈԱԿ-ի գլխավոր գործադիր տնօրեն Արա Հովսեփյանը:

Արա Հովսեփյանը հայտնեց, որ հոկտեմբերի 12-ին կայանալիք մամլո մեծ ասուլիսում կմեկնարկ «Գնիր հայկականը» արշավը: Մամլո ասուլիսում կտեղեկացվի նաև հաջորդող օրերին կայանալիք «Նոր մոտեցում, բարձր եկամուտ» ցուցահանդեսի մասին, որի մաս է կազմելու «Գնիր հայկականը»: Ցուցահանդեսի մասին մանրամասն տեղեկատվությունը նամակով արդեն իսկ ուղարկվել է ՀՀ Վարչապետին:

Արա Հովսեփյանը ՀՀ Վարչապետին խնդրեց նաև մասնակցել բացման արարողությանը՝ ողջույնի խոսքով:

<u>Միաձայն</u> որոշվեց ընդունել ի գիտություն «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ – Հայաստան ծրագրի Ջրից դեպի Շուկա բաղադրիչի շրջանակներում նախատեսվող «Գնիր հայկականը» արշավի վերաբերյալ տեղեկատվությունը:

Այլ հարցերի շրջանակում Պողոս Շահինյանը ներկաներին հայտնեց, որ հաջորդ նիստում ներկա գտնվող շահառուները այլևս հանդես չեն գալու, քանի որ ՀՄՀ-Հայաստան ծրագրի շրջանակներում ներկայումս տեղի են ունենում Շահառուների խորհրդի նոր ընտրություններ, որի արդյունքում ձևավորվելիք Շահառուների խորհրդի կազմից էլ կընտրվեն Կառավարման խորհրդի՝ ՇԽ հաջորդ պատվիրակները :

ՀՀ Վարչապետ Տիգրան Սարգսյանը շնորհակալություն հայտնեց բեղմնավոր համագործակցության համար, հաջողություն մաղթեց Շահառուների խորհրդի պատվիրակներին և հույն հայտնեց վերջիններիս նորից տեսնել Կառավարման խորհրդում:

Հարցերի սպառումից հետո նիստն ավարտվեց:

«ՀԱՁԱՐԱՄՅԱԿԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ-ՀԱՅԱՍՏԱՆ»
ՊՈԱԿ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ,
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Տ. ՍԱՐԳՍՅԱՆ

Նիստն արձանագրեց՝
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի իրավախորհրդատու,
«ՀՄՀ-Հայաստան» ՊՈԱԿ-ի Կառավարման Խորհրդի քարտուղար
Ն. Մարտիրոսյանը